Քաղաքացիական գործ թիվ՝ **ԵԴ2/34329/02/23**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)

նախագահությամբ՝ դատավոր Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆԻ
2023 թվականի հոկտեմբերի 30-ին

Ուսումնասիրելով «Վարարակն» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

**1.** Ընկերության ներկայացուցիչը 2023 թվականի հոկտեմբերի 17-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ խնդրելով անվավեր ճանաչել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Ս. Բաղինյանի 2023 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը՝ «Վարարակն» ՓԲ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Հայցադիմումը դատավոր Ա. Մուշեղյանին է մակագրվել 2023 թվականի հոկտեմբերի 17-ին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել 2023 թվականի հոկտեմբերի 18-ին:

Դատավոր Ա. Մուշեղյանիս 2023 թվականի հոկտեմբերի 23-ից 27-ը ներառյալ ամենամյա պարտադիր վերապատրաստման դասընթացներին մասնակցելու հիմքով որոշումը կայացվել է 2023 թվականի հոկտեմբերի 30-ին:

**2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ընդդատյա է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներին և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

Դատարանը գտնում է նաև, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ, 125-րդ, 188-րդ, 199-200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝ Դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

**1.** «Վարարակն» ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Ս. Բաղինյանի 2023 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը՝ «Վարարակն» ՓԲ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

**1.2.** Գործը քննել գրավոր ընթացակարգով:

**2.** Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականի դեկտեմբերի 11-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

*Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց:*

*Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:*

**ԴԱՏԱՎՈՐ՝** **Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ**